

**ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ**

**Հուլիս-դեկտեմբեր, 2010թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

13 սեպտեմբերի, 2011թ.

Կրոնական ազատությունը պաշտպանված է Սահմանադրությամբ, սակայն այլ օրենքներ ու հայեցակարգեր սահմանում են որոշ սահմանափակումներ փոքրամասնական կրոնական խմբերի անդամների կրոնական ազատության նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, կառավարությունը կրոնական ազատության նկատմամբ գոյություն ունեցող իրավական սահմանափակումները չի կիրառել: Այս զեկույցի հաշվետու ժամանակահատվածում կառավարության կողմից կրոնական ազատության նկատմամբ հարգանքի մասով փոփոխություն չի եղել:

Եղել են հաղորդումներ կրոնական պատկանելության, հավատքի և գործունեության հիման վրա հասարակական շարաշահումների և խտրականության վերաբերյալ:

Կրոնական ազատության հարցն ԱՄՆ կառավարությունը քննարկում է կառավարության հետ՝ մարդու իրավունքների խթանման ընդհանուր քաղաքականության համատեքստում:

**Մաս I. Կրոնական ժողովրդագրությունը**

Երկրի ընդհանուր տարածքը կազմում է 11.500 քառակուսի մղոն, իսկ բնակչությունը՝ ավելի քան 3 միլիոն: Ըստ 2001թ. մարդահամարի տվյալների ազգաբնակչության 97.8 տոկոսը կազմում են էթնիկ հայերը: Երկրի բնակչության մոտ 90 տոկոսն անվանականորեն հարում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն (Հայաստանյայց Եկեղեցուն), որն արևելյան վեց հնագույն ավտոկեֆալ եկեղեցիներից մեկն է, որի հոգևոր կենտրոնը (Մայր Աթոռ) տեղակայված է Էջմիածնի Մայր տաճարում ու վանքում՝ մայրաքաղաք Երևանից ոչ հեռու:

Կան այլ կրոնական խմբերից կազմված փոքր համայնքներ: Խմբերը, որոնք կազմում են բնակչության 5 տոկոսից պակաս մասը, ներառում են կաթոլիկներ՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և Հայկական Միսիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, հայ ավետարանչական եկեղեցու անդամ քրիստոնյաներ, մոլոկաններ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաների տարբեր խմբեր, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու անդամներ (մորմոններ), եզդիներ (եզդիզդ դավանող ոչ մահմեդական քրդեր), հրեաներ, սունի մահմեդական քրդեր, շիա մահմեդականներ, հեթանոսներ և այլ խմբեր:

Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում, մինչդեռ հրեաները, մորմոններն ու ուղղափառ քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականների փոքրիկ համայնքը՝ հիմնականում շիա մահմեդականներ՝ ներառյալ իրանցիներն ու ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, բնակվում են Երևանում:

## **Մաս II. Կրոնական ազատության հանդեպ հարգանք կառավարության կողմից**

### ***Իրավա-օրենսդրական դաշտ***

Կառավարության կողմից միջազգային իրավական չափանիշների ընդունման կարգավիճակի համար տես՝ Մարդու իրավունքների մասին զեկույց, Հավելված C, <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2010/appendices/index.htm>:

Կրոնի ազատությունը պաշտպանված է Սահմանադրությամբ, սակայն այլ օրենքներում ու հայեցակարգերում կան որոշ սահմանափակումներ փոքրամասնական կրոնական խմբերի անդամների կրոնական ազատության նկատմամբ:

Օրենսդրությամբ հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների), այդ թվում և կրոնական խմբերի գրանցումը պարտադիր չէ, սակայն միայն գրանցված կազմակերպություններն են, որ ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Չգրանցված կառույցները չեն կարող հրատարակել 1000-ից ավել տպաքանակով թերթեր ու ամսագրեր, վարձակալել տարածք ժողովների համար, հեռարձակել հաղորդումներ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, կամ պաշտոնապես հովանավորել իրենց այցելուների համար վիզաների ստացումը, չնայած անդամները դա կարող են անել որպես անհատ: Գրանցման պայմաններին բավարարելու համար կրոնական կազմակերպությունները պետք է «զերծ լինեն նյութապաշտությունից և ուղղված լինեն դեպի գուտ հոգևոր ոլորտներն», ունենան առնվազն 200 հոգի չափահաս անդամներ և առաջնորդվեն «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» ուսմունքով: Գրանցման պահանջները չեն վերաբերում ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններին: Կրոնական կազմակերպությունների գրանցումն իրականացվում է Պետական ռեգիստրում: Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությունը հետևում է կրոնական հարցերին և կատարում է փորձագիտական դեր գրանցման գործընթացում: Գրանցվելու դիմում ներկայացրած որևէ կրոնական խմբի գրանցումը կառավարության կողմից մերժելու մասին հաղորդումներ չեն եղել:

Սահմանադրությունը ճանաչում է «Հայաստանյայց Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությամբ ու Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքով սահմանվում է եկեղեցու և պետության տարանջատումը, բայց Հայաստանյայց Եկեղեցուն շնորհվում է ազգային եկեղեցու պաշտոնական կարգավիճակ:

Օրենքը որոշակի արտոնություններ է շնորհում Հայաստանյայց Եկեղեցուն, որոնք չեն գործում մյուս կրոնական խմբերի համար: Օրենքի համաձայն պետությունը ճանաչում է եկեղեցու կանոնական ծեսով իրագործած ամուսնությունների իրավական ուժը, սակայն դեռևս չկան այդ դրույթի կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ իրավական ակտերը: Հայաստանյայց Եկեղեցուն նաև թույլատրվում է ունենալ մշտական ներկայացուցիչներ հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, գործամասերում, և ազատագրկման բոլոր վայրերում, մինչդեռ մյուս կրոնական կազմակերպությունները կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն այդպիսի պահանջ լինելու դեպքում: Ընդհանուր առմամբ, օրենքը պաշտոնապես ճանաչում է այն բարոյական ու էթնիկ դերը, որն ունի Հայաստանյայց Եկեղեցին հասարակության համար, քանզի քաղաքացիների մեծ մասը եկեղեցին համարում են ազգային ինքնության և մշակութային ժառանգության անբաժանելի մաս:

Օրենքն արգելում է «հոգեորսությունը», սակայն չի սահմանում «հոգեորսություն» եզրույթը, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը: Արգելքը վերաբերում է բոլոր խմբերին, այդ թվում և Հայաստանյայց Եկեղեցուն: Գրանցված կրոնական կազմակերպությունների մեծ մասը հաշվետու ժամանակաշրջանում չի հայտնել իրենց գործունեության ընթացքում ի հայտ եկած որևէ զգալի իրավական խոչընդոտների մասին:

Օրենքով սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է: Հանրակրթական դպրոցներում կարող են դասավանդել միայն կառավարության կողմից արտոնված և վերապատրաստում անցած մասնագետները: Հայ Եկեղեցու պատմությունը ներառված է հանրակրթական առարկայացանկում և դասավանդվում է հանրակրթական դպրոցի ուսուցիչների կողմից: Հայաստանյայց եկեղեցին իրավունք ունի մասնակցել այդ առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքերի մշակմանը, ինչպես նաև այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Հայաստանյայց եկեղեցին կարող է նաև առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել: Բոլոր կրոնական կազմակերպություններն իրենց անդամների ուսուցման համար կարող են կրոնի դասավանդման խմբեր ստեղծել՝ այդ նպատակի համար օգտագործելով իրենց պատկանող կամ հատկացված շինությունները: Օրենքը Հայաստանյայց Եկեղեցուն իրավունք է վերապահում կազմակերպել կրոնի ուսուցման կամավոր դասընթացներ պետական կրթական հաստատություններում՝ այդ նպատակի համար օգտագործելով այդ հաստատությունների շինություններն ու ռեսուրսները:

Կառավարության կողմից որպես ազգային տոն նշվում է հունվարի 6-ը, այն օրը, երբ Հայաստանյայց Եկեղեցին տոնում է Սուրբ Ծնունդը: Տարվա ընթացքում կառավարության որոշմամբ հինգ եկեղեցական տոների հետ կապված երկուշաբթի օրերը պաշտոնապես հայտարարվում են ոչ աշխատանքային, քանի որ այդ օրերին ընդունված է այցելել հարազատների գերեզմանները: Դրա փոխարեն նախորդ կամ հաջորդ շաբաթ օրը հայտարարվում է աշխատանքային օր:

Օրենքը թույլ է տալիս դավանական նկատառումներով զինվորական ծառայությունից խուսափող անձանց, պետական հանձնաժողովի թույլտվությամբ, մարտական զինվորական ծառայության փոխարեն անցնել ոչ-մարտական զինվորական կամ աշխատանքային ծառայություն: Օրենքը նաև քրեականացնում է այլընտրանքային աշխատանքային ծառայությունից խուսափելը: Այնուհանդերձ, դավանական նկատառումներով զինվորական ծառայությանը դեմ անձինք անընդունելի են համարում զինվորական հսկողության ներքո ընթացող այլընտրանքային աշխատանքային ծառայությունը:

Չնայած օրենսդրությամբ արգելվում է արտերկրում հոգևոր կենտրոններ ունեցող եկեղեցիների ֆինանսավորումը արտերկրից՝ կառավարությունը չի կիրառել այս արգելքը:

***Կրոնական ազատության սահմանափակումներ***

Ընդհանուր առմամբ, կառավարությունը կրոնական ազատության նկատմամբ գործող իրավական սահմանափակումները չի կիրառել: Հաշվետու ժամանակահատվածում կառավարության կողմից կրոնական ազատության նկատմամբ հարգանքի մասով փոփոխություն չի եղել:

Հաշվետու ժամանակահատվածի ողջ ընթացքում տեղական դիտորդները հաղորդել են, որ դպրոցներում բացասական վերաբերմունք է դրսևորվում Հայաստանյայց Եկեղեցուց գատ որևէ այլ կրոնական խմբի պատկանող աշակերտների ու ուսուցիչների հանդեպ: Ըստ հաղորդումների այս

վերաբերմունքն առավել ակնհայտ է դառնում Հայ Եկեղեցու պատմության դասերին, որոնք ըստ կրոնական խմբերի ու տեղական դիտորդների պարունակում են կրոնական ուսուցման տարրեր:

«Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» (ՔՄՄՕ) հասարակական կազմակերպությունը, որն առնչություն ունի Երևանի Ավետարանական Եկեղեցու հետ, սեպտեմբերին դատական հայց է ներկայացրել Բարեգործական ծրագրերը համակարգող կառավարական հանձնաժողովի դեմ՝ մայիսին ՔՄՄՕ ծրագրերի բարեգործական կարգավիճակը չեղյալ համարելու համար: ՔՄՄՕ խնդրում էր, որ դատարանը չեղյալ համարի բարեգործական կարգավիճակից զրկելու հրամանը և փոխհատուցի իր ծրագրերի շրջանակում վճարված հարկերի դիմաց: ՔՄՄՕ պնդում էր, որ դարձել է կրոնական խտրականության գոհ, իսկ Հայաստանյայց Եկեղեցու պնդումները կազմակերպության կողմից բարեգործական ծրագրերի ընթացքում քարոզչություն և «հոգեբուժություն» իրականացնելու վերաբերյալ, ճիշտ չեն:

Եհովայի վկաների համայնքը հաղորդում էր, որ շարունակել է խնդիրներ ունենալ տարեկան հավաքների համար մեծ տարածքներ վարձակալելու հարցում: Ըստ խմբի հաղորդման՝ իրենք առանց հաջողության այդպիսի խնդրանքներով դիմել են տասնյակից ավելի տեղեր, հիմնականում մարզադաշտեր, որոնք հանդիսանում են մասնավոր սեփականություն կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն, կամ տնօրինվում են վերջիններիս կողմից: Որոշ դեպքերում խումբն ուներ արդեն ստորագրված պայմանագրեր, որոնք չեղյալ են համարվել: Խումբը պնդում էր, որ սեփականատերերի ու տնօրինողների նկատմամբ ճնշում է եղել Հայաստանյայց Եկեղեցու և իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից, որպեսզի մերժեն Եհովայի վկաներին:

### ***Կրոնական ազատության չարաշահումներ***

Եղել են հաղորդումներ երկրում կրոնական ազատության չարաշահումների, այդ թվում կրոնական բանտարկյալների ու կալանավորների մասին:

Ըստ Եհովայի վկաների 2010թ. հունիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար ազատագրկման են դատապարտվել Եհովայի 19 վկաներ, որոնցից 10-ին նշանակվել է ազատագրկման 30-ամսյա, 5-ին՝ 24-ամսյա, 2-ին՝ 36-ամսյա, 1-ին՝ 27-ամսյա և 1-ին՝ 12-ամսյա ժամկետ:

Ըստ Երևանում Եհովայի վկաների առաջնորդների հաղորդման՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ դավանական կամ կրոնական նկատառումներով զինվորական կամ այլընտրանքային աշխատանքային ծառայությունից հրաժարված Եհովայի վկաների 73 անդամներ գտնվում էին բանտում: Եհովայի վկաների ներկայացուցիչները փաստում էին, որ ազատագրված բոլոր անձինք հնարավորություն են ունեցել բանտի փոխարեն ընտրել այլընտրանքային ծառայությունը, սակայն նրանք հրաժարվել են, քանի որ դեմ են այն հանգամանքին, որ այլընտրանքային ծառայության նկատմամբ վարչական հսկողությունն իրականացվում է զինվորականների կողմից:

### **Մաս III. Կրոնական ազատության իրավունքի վրա անդրադարձող հասարակական գործողություններ**

Եղել են հաղորդումներ կրոնական պատկանելության, հավատքի և դավանանքի հիման վրա հասարակական չարաշահումների վերաբերյալ: Հասարակության վերաբերմունքը փոքրամասնական կրոնների մեծ մասի նկատմամբ հակասական է: Թեպետ շատերը չեն հետևում

Եկեղեցական կարգ ու կանոնին, սակայն էթնիկ ինքնության և Հայաստանյայց Եկեղեցու միջև կապն ամուր է:

Ըստ որոշ դիտորդների ընդհանուր հասարակությունը բացասական վերաբերմունք է արտահայտել բոլոր փոքրամասնական կրոնական խմբերի նկատմամբ: Մակայն համաձայն տեղական փորձագետների այս վերաբերմունքը չի անդրադառնում անձնական կամ դրացիական հարաբերությունների վրա, այլ մաս են կազմում ընդհանուր ընկալման, որ փոքրամասնական կրոնական խմբերը սպառնալիք են հանդիսանում պետականության համար: Ժամանակ առ ժամանակ փոքրամասնական կրոնական խմբերը շարունակել են մնալ որպես Հայաստանյայց Եկեղեցու սպասավորների թշնամական քարոզչության թիրախ, իսկ փոքրամասնական կրոնական խմբերի անդամները հասարակության կողմից խտրական վերաբերմունք և անհանդուրժողականության են հանդիպել, այդ թվում նաև աշխատավայրերում:

Հոկտեմբերի 19-ին Երևանի կենտրոնում 2006թ. տեղակայված հայ-հրեական ողբերգությունների հուշակոթողի հրեական հատվածում եղել է պղծում: Հուշակոթողի վրա լցված էր շագանակագույն ներկ, պատկերված էր կեռախաչ ու գրված «Մահ հրեային»: Հրեական համայնքի ներկայացուցիչները ժխտել են հակասեմական տրամադրությունների առկայությունը և միջադեպը որակել են որպես «խուլիգանություն», հավանաբար, օտարերկրացիների կողմից: Հրեական համայնքը գովեստով էր արտահայտվում նախագահի աշխատակազմի անհապաղ արձագանքի վերաբերյալ, որին հետևեցին տեղական իշխանությունների ու իրավապահների գործողությունները: Քաղաքային իշխանությունները հաջորդ առավոտյան վերացրեցին պղծման հետքերը, իսկ ոստիկանությունը քննություն սկսեց: Հոկտեմբերի 21-ին Նախագահի մամուլ խոսնակը և Հայաստանյայց եկեղեցին հանդես եկան առանձին հայտարարություններով՝ դատապարտելով հուշարձանի անարգումը:

ԶԼՄ-ների մեծ մասը, այդ թվում պետական ֆինանսավորմամբ գործող Հանրային հեռուստաընկերությունը շարունակել են Հայաստանյայց Եկեղեցուց գատ բոլոր այլ կրոնական խմբերին իրենց հրապարակումներում և հեռարձակումներում պիտակել որպես «աղանդներ»: Տարբեր հեռուստաընկերություններ շարունակվել են եթերում ներկայացնել քննարկումներ, որոնց ժամանակ Հայաստանյայց Եկեղեցու ներկայացուցիչների և այլ մասնակիցների կողմից փոքրամասնական կրոնական խմբերը պիտակվել են որպես պետության և ազգի միասնականության թշնամիներ:

Նոյեմբերի 9-ին NEWS.am առցանց լրատվական գործակալությունը հայտնել է, որ սեփական ծնողների սպանության մեջ կասկածվող քաղաքացին հանդիսանում է Եհովայի վկա, և իր կրոնական համոզմունքների հետ կապված հաճախ է վիճել ծնողների հետ: Շատ լրատվամիջոցներ, այդ թվում Հ1 հանրային հեռուստաընկերությունը, բազմաթիվ այլ հեռուստաընկերություններ, տպագիր մամուլը, ռադիոկայանները և ինտերնետ-կայքերը տարածել են այդ չստուգված մեղադրանքը որպես փաստ: Նոյեմբերի 11-ին, Եհովայի վկաներ տեղական կազմակերպության առաջնորդները պաշտոնապես հերքել են «անհիմն և ոչ ճշգրիտ» հայտարարությունը՝ ասելով, որ սպանության մեջ կասկածյալ երիտասարդը երբեք կապ չի ունեցել իրենց կազմակերպության հետ, և որ լրատվական առաջին հրապարակումը սկիզբ է հանդիսացել «լրատվամիջոցներում վարկաբեկող հրապարակումների, որոնք նպաստել են կրոնական անհանդուրժողականության բորբոքմանը»: Եհովայի վկաների ղեկավարությունը նաև նամակներ է ուղարկել լրատվական գործակալություններին և հեռուստաալիքներին՝ պահանջելով հերքում և հրապարակային ներողության հայցում:

Նոյեմբերի 11-ին 21 հանրային հեռուստաընկերության լրատվական և վերլուծական ծրագրերի փոխտնօրենն իր «Տեսանկյուն» վերլուծական ծրագրի ընթացքում նշել է, որ սպանության մեջ կասկածվող Եհովայի վկաների ենթադրյալ հետևորդին «իր աստվածն է դրդել սպանություն գործել»: Մեկնաբանը ցուցադրել էր բռնություն պատկերող դրվագներ մի ֆիլմից (կրոնական ազատության խնդրի հետ առնչություն չունեցող) և առաջարկել բռնություններով ուղեկցվող նման մարտավարություն կիրառել «աղանդների» նկատմամբ: Մեկնաբանը նաև «աղանդների» հանդեպ անհանդուրժողականության ուղղակի կոչեր է արել:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրեն «Մեկ ազգ կուսակցություն» կամ «Մեկ ազգ կազմակերպությունների դաշինք» անվանող խումբը շարունակել է Եհովայի վկաներին դատապարտող թռուցիկներ շրջանառել Երևանում: Թռուցիկների մեծ մասը պարզապես «աղանդներից» զգուշանալու կոչեր էին պարունակում, բայց կային և այնպիսիք, որ քաղաքացիներին կոչ էին անում «պայքարել» դրանց դեմ:

#### **Մաս IV. ԱՄՆ կառավարության քաղաքականությունը**

Կրոնական ազատության հարցն ԱՄՆ կառավարությունը քննարկում է Կառավարության հետ՝ մարդու իրավունքների խթանման ընդհանուր քաղաքականության համատեքստում:

Դեսպանության պաշտոնյաները մշտապես կապ են պահպանել Կաթոլիկոսի (Հայաստանյայց Եկեղեցու առաջնորդի) հետ Էջմիածնում և երկրի այլ կրոնական և էկումենիկ խմբերի առաջնորդների հետ: Դեսպանությունը նաև կանոնավոր կապ է պահպանել այլ երկրներում կենտրոններ ունեցող կրոնական խմբերի տեղի ու կարճաժամկետ այցեր կատարող ներկայացուցիչների հետ և, անհրաժեշտության դեպքում, նրանց հուզող հարցերը բարձրացրել կառավարության առջև: Դեսպանության պաշտոնյաները մասնակցել են տարբեր կրոնական համայնքների կազմակերպած և կրոնական ազատության խթանմանն ուղղված այլ միջոցառումներին: